

նամ Ս. Յարութեան տօնէն առաջ. այս պատճառաւ կը խնդրեմ որ ներես իմ դանդաղումիս» (1) :

Յակոբ՝ Եղիազարին սպասելով, կը շարունակէր նաեւ իր խորհրդակցութիւնները թէ՛ Մայրաքաղաքին հայ կարկառուն անձներուն թէ՛ Ս. Աթոռի ներկայացուցչին հետ : Սակայն տեղական կառավարութիւնը ճգճգել կու տայ իր ճամբորդութիւնը դէպի Հոռոմինչ որ մեծ ցաւ կը պատճառէ իր սրտին (2) : Եւ Եղիազարի ժամանումէն առաջ, Հոգեպալուստէն ետք, որ այն տարին Մայիս 30ին կը հանդիպէր, կը հիւանդանայ, եւ օրէ օր տկարանալով կը վախճանի 1680ի Օգոստոսի սկիզբը, 82 տարեկան եւ 4 ամսուան հասակին մէջ, մեծ բարեպաշտութեամբ Սուրբ Խորհուրդներն ընդունելէ յետոյ (3) :

Իր տապանին վրայ մահուան երկու թուական նշանակուած է. ձախ երեսին վրայ գրուած է. «Հազար հարիւր քսան եւ ինն Հայոց թրվի երկրորդ աւուր ամսոյն Հոռոմայ Օգոստոսի» : Իսկ աջ երեսին վարի անկիւնը փորագրուած է հետեւեալ թուականը

(1) Զամչեան Գ. 718. — Ազգայ. Բ. 2611-2612 :

(2) Archivio S. C. P. F. Miscellnea Varie, Tomo X, ff. 120-121.

(3) Զամչեան, Գ. 719. — Լէո, Անդ, 348. — Ազգայ. Բ. 2611-2612. Archivio Vaticano, Miscellanea, Armadio III Tomo 2, fol. 384.